

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## Յ Ո Յ Ս

(Նահատակ լիզուի 1500-ամեայ արտասովոր սուրբին  
և 400-ամեայ տառապալից տպագրութեան՝ մխի-  
թարութիւն)

—

Տես, աշունք է. հունձը արած, կտլ կալսած

Դաշտը սիրուն էլ չէ ժպտում մեր տեսած.

Այժմ անշուր, գուրկ գարդերից՝ մերկ իռպառ,

Ընկած է ցուրտ մահվան շեմքին՝ ուժասպառ:

2ը կան ծաղկունք ցօղով զօծված, շողշողուն,

Ո՛չ թիթեաներ, ո՛չ միջատներ գոյնզգոյն,

Այն հրաշալի եռուն-գեռուն թարմ կեանքից,

Կարծես, մնաց հէգ սգաւոր, խոր կսկիծ:

Եւ այդ քիչ էր, մէկ էլ յանկարծ մի ստուեր,

Դե բոցավառ հրէշ թէ վիշապ սևահեր,

2որ խոզանով ծածկված դեղնած աշտերին

Այրեց, կիզեց, նստացրեց սև մոխրին:

Էլ ի՛նչ կարծիք, չը մոռացվեց երախտիք,

Դարուն, ամառ դաշտի թափած ջանք քրտինք,

Երբ հին փառքից սոսկ խոզանն էր մնում.

Ա՛յն էլ մարդիկ հուրը ձգած դարձրին շիր:

Թէև քեզ, դաշտ, ծածկեցին սև սաւանով,

Մի վհատիր, կայ անսասան ասլահով,

Այդ մոխրը նոր թարմ ոյժ է ամփոփում.

Կը դայ գարուն, և դու կանես նոր կեանքով: